ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

“ 29 ” հունվարի 2014թ № 7 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 762 որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2013 թվականի ապրիլի 23-ի <<Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օտագործման ավտոմոբիլային տրասնպորտով ուղևորների կանոնավոր փախադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> N 57-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 20-ի նիստի N 1 արձանագրության, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1.Հաստատել Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային մարզային հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 20-ի N 1 նիստի արդյունքները՝ համաձայն հավելվածի:

2.Հավելվածում նշված <<Սիսիան-Սպանդարյան-Ծղուկ-Գորայք>>, <<Մեղրի-Կապան>> երթուղիների սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի, իսկ <<Կապան-Սյունիք>> երթուղու սպասարկման ժամկետ սահմանել չորս տարի:

3.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Վ.ՀԱԿՈԲՅԱՆ

2014թ հունվարի 29
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի
հունվարի 29-ի N 74 որոշման

Արձանագրություն N 1

ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 20 հունվարի 2014 թվականի N 1 նիստի

Օրակարգում – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2014 թվականի հունվարի 14-ին /Սիսիանի տարածաշրջան/, հունվարի 15-ին /Գորիսի տարածաշրջան/, հունվարի 16-ին /Կապանի և Մեղրիի տարածաշրջաններ/, կայացած մրցույթների արդյունքների ամփոփման մասին:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի թվով հինգ անդամներ և նիստը վարում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա.Ուստաբաշյանը:

Լսեցին – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2014 թվականի հունվարի 14-ին /Սիսիանի տարածաշրջան/, հունվարի 15-ին /Գորիսի տարածաշրջան/, հունվարի 16-ին /Կապանի և Մեղրիի տարածաշրջաններ/, կայացած մրցույթների արդյունքների ամփոփման մասին:

/ Զեկ. Ս. Աղաբեկյան/

Ուսումնասիրելով կայացած մրցույթների ընթացքում մասնակիցների ներկայացրած հայտերը և գնահատելով մրցույթին ներկայացված տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակները մրցութային հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաղթող ճանաչել անհատ ձեռնակատեր՝ Մեխակ Ալեքսանյանին ներմարզային հետևյալ երթուղում.

1). <<Սիսիան-Սպանդարյան-Ծղուկ-Գորայք>>՝ ավտոմեքենաների մակնիշը՝ «Ֆորդ», պետհամարանիշը՝ 28 UO 650, «Ֆորդ», պետհամարանիշը՝ 35 SD 913,

2. Հաղթող ճանաչել անհատ ձեռնակատեր՝ Վիլիկ Ազարյանին ներմարզային հետևյալ երթուղում.

1). <<Մեղրի-Կապան>>՝ ավտոմեքենաների մակնիշը՝ «Ֆորդ», պետհամարանիշը՝ 35 VL 545, «Hyundai», պետհամարանիշը՝ 53 SS 213,

3. <<Կապան-Սյունիք>> երթուղու համար հայտ էին ներկայացրել <<Լավ ընկեր>> և <<Վաչագան-Նավասարդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները:

Տրանսպորտային միջոցների գնահատման ժամանակ <<Լավ ընկեր>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հավաքել է 874 միավոր, իսկ <<Վաչագան-Նավսարդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հավաքել է 778 միավոր:

Համաձայն 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման կարգի 45-րդ կետի պահանջների հաղթող ճանաչել <<Լավ ընկեր>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը <<Կապան-Սյունիք>> ներմարզային երթուղում: Ավտոմեքենաների

մակնիշները՝ <<Ֆորդ>>, պետհամարանիշը 171 ՕՎ 61, <<Ֆորդ>>, պետհամարանիշը 356 ՕՎ 61

4. <<Մեղրի-Ագարակ>> երթուղու համար հայտ էր ներկայացրել <<Զքնավոր>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Մասնակցի կողմից որպես տրանսպորտային մեքենա, ներկայացվել էր մեկ դուռ ունեցող ավտոբուս, այն հակասում է ՀՀ ավտոմոբիլային տրանսպորտի մասին օրենքի՝ Հոդված 26-ի 6-րդ կետի պահանջին: Ելնելով վերոգրյալից առաջարկվել է մերժել <<Զքնավոր>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը:

5. <<Սիսիան – Դարբաս – Գետաթաղ – Լոր - Լեռնաշեն>>, <<Սիսիան – Շամբ - Լծեն>>, <<Սիսիան - Կապան>>, <<Սիսիան – Աշոտավան – Հացավան - Թասիկ>>, <<Սիսիան - Իշխանասար>>, <<Գորիս - Որոտան>>, <<Գորիս – Շինուհայր – Հալիձոր - Տաթև>>, <<Գորիս – Խնածախ – Վաղատուր - Խոզնավար>>, <<Գորիս – Տեղ - Կոռնիձոր>>, <<Գորիս - Հարթաշեն>>, <<Գորիս - Հարժիս>>, <<Գորիս - Բարձրավան>>, <<Մեղրի - Ագարակ>>, <<Կապան -Դավիթ Բեկ>>, <<Կապան – Ճակատեն – Շիկահող – Սրաշեն - Ն.Հանդ - Ծավ>>, <<Կապան - Անտառաշատ>>, <<Կապան - Մեղրի>>, <<Կապան - Սևաքար - Եղեգ>>, <<Կապան - Գեղի>> երթուղիների համար մրցույթային հայտեր չեն ներկայացվել:

6. Մրցույթային հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով մրցույթում չկայացած նշված երթուղիների համար որոշեց 2014 թվականի մարտի 20-ին հայտարարել նոր մրցույթ:

7. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը:

(Քվեարկության արդյունքները՝ կողմ՝5, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա):

Հանձնաժողովի նախագահի տեղակալ **Ա.Օտտաբաշյան**

անդամներ **Ս. Աղաբեկյան**

Կ.Կոզմանով

Ս.Ավետիսյան

Ս. Արզումանյան